

ՀԱՆԴԵՍ


ԵՒ ԲԱՅԱՌԻԿ ՆԻՍՏ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Ի ՊԱՏԻՒ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ

ԾՆՆԴԵԱՆ 1600-ԱՄԵԱԿԻՆ

18 ՅՈՒՆԻԱՐ 1963



Մխիթարեան ձեմարանի տարեկան վարիչ Հ. Գերոբե վրդ. Ա. Զրաֆեան կատարեց բացումը այս հանդիսաւոր ու բացառիկ նիստին, ոգեկոչելով յիշատակը անմահ Հացեկացիին:

Հանդիսին կը նախագահէր Ուխտիս Ընդհ. Արքայապետ Գերպոյ. Սրապիտն Արքեպիսկոպոս Ուլուհոնեան, իր շուրջն ունենալով Մխիթարեան ձեմարանի աւագ եւ կրտսեր անդամները բոլոր, բանասէր ու գրագետ Հայրերը, որոնք հաւաքուած էին ի մի, յարգանքի դափնեպսակ մը դնելու Օշա-

կանի մեծ Սուրբին խնկելի գերեզմանին վրայ, Ագրիականի այս հեռաւոր ամբողջութեան:

Հանդիսավայրին խորը, քաշեայ պատուարին վրայ կը ցոյար Ս. Մեսրոպի մեծ նկարը, գործ իտալացի նկարիչ Ֆր. Մաննոք-Քոյի, գծուած 1780ի տեղեկները: Ստորեւ, հայկական ընտիր գորգի մը վրայ, մասնաւոր գրակալով գետեղուած էր հագարմեայ հսկայ ձեռագիր մը, Տրապիզոնի Աւետարանը, Մաշտոցեան երկաթագրի գմայլելի էջ մը պարզելով մեր աչքին, սփռելի մանրանկարներով մոխրացած: Շուրջը, խմբուած էին Ս. Մաշտոցի մասին գրուած գլխաւոր ուսումնասիրութիւնները, Հայաստանի յորելիմական տպագրութիւնները, Մխիթարեան աշխատասիրութիւնները, որոնք շեղ շրջանակ մը կազմած էին պատկառելի ձեռագրին ու պատուանդան՝ անմահ Մաշտոցի դիմանկարին:

Օրուան բանախօսն էր Հ. Պողոս վրդ. Անանեան, որ այս առթիւ պատրաստած էր ընդարձակ ուսումնասիրութիւն մը՝ Մեսրոպ Մաշտոցի կեանքին ու գործունէութեան մասին. յարգելի բանասէրը նկատեց Մաշտոցը նախ աշխարհական կեանքի մէջ, ապա եկեղեցական ասպարէզին մէջ. եւ ահա հարցեր բազմազան. ամէնէն առաջ անուան ստուգաբանութիւնը, ապա մկրտութեան հարցն ու տարբերութիւնը, Գանիէլեան գրքի ու կնքի խնդիրը, Մեսրոպի ճամբորդութիւնները, առաքելութիւնները, գրոց գիտը, վայրը, թուականը: Ու մենք մտնով փայտեցինք Մաշտոցի հետ Տարօնէն Արտաշատ, բարձրացանք Գողթնի լեռները, իջանք Միջագետքի անապատները, լսելու հեւքը բազմաշ-

խատ վանականին ու մեծ հայրենասէրին. Արաֆսի փերուն, ժողովուրդին ցնծութեան մէջ՝ տեսնաւ պաշտելի վարդապետը, ու հետեւեցանք մինչեւ Օշականի իր հանգստարանը, մասնակցելով հրաշատեսիլ քափօրին: Բանասէր Հօր այս ուսումնասիրութիւնը պիտի տպագրուի նաեւ առանձին հատորով:

Գրական բաժնին մէջ, Բաղձալէպի խմբագիրը ներկայացուց բանաստեղծ Հ. Վահան վրդ. Յովհաննէսեանի մէկ նոր ստեղծագործութիւնը, ներշնչուած Մաշտոցեան այս յորելիմէն, ու իբր կանքեղ մը նուիրական՝ քերթուածը կարծէք կախուեցաւ Օշականի դամբանին վրայ, անոր անմահ փառքը ցոլացնելու համար աշխարհի:

Ուխտիս Ընդհ. Արքայապետ, որ միանգամայն մշտնջենաւոր նախագահն է Մխիթարեան ձեմարանին, փակման խօսքին մէջ՝ շեշտեց մասնաւորապէս մեծ Հացեկացիին հետեւելուն վրայէն փախելու մեր նուիրական պարտականութիւնը, շարունակելու համար լուսաւորութեան պայքարը ու բարձր պահելու մշակոյթի այն ջանքը, որ վառեց Ս. Մեսրոպ Մաշտոց, որ արժարժեցին յաջորդաբար ներկայացնել, Շնորհալիներ, Մխիթարներ եւ Ալիշաններ: Կտակ մըն է նուիրական, ըսաւ Գերպոյ. Արքայապետ, որ փոխանցած են մեզի մեր նախահայրերը, ձեռագրական հսկայ վաստակ մը փերկելով աւերածէ ու կորուստէ. մենք անոնց երդուեալ պահպաններն ենք, Մեսրոպեան լոյսի ջանքակալներ. հարկ է որ այդ լոյսը նոր կորովով տարածենք ի սփիւռս աշխարհի, եւ հայագիտական նորանոր նուաճումներով, հրատարակութիւններով փայտեցնենք Մաշտոցեան հսկայ ժառանգութիւնը: Մաշտոցեան փառասօնը, լոյսի եւ իմաստութեան տօնն է, հանձարի պանծացումն է. ու մենք այդ



Հանդէսէն վերջ, Հայրերը խմբուած են Ձեռագրին շուրջ:

փառասօնի դրօշակիրներն ըլլանք: Հուսկ, հրաւիրեց Մաշտոցի օրհնութիւնը ամէնուս վրայ, բեղուն գործունէութեան մաղբանքներով:

ձեմարանական երկրորդ գումարումի մը ընթացքին, նուիրուած նոյնպէս Ս. Մեսրոպ Մաշտոցի յիշատակին, Հ. Ներսէս վրդ. Տէր Ներսէսեան ներկայացուց ընդարձակ ուսումնասիրութիւն մը՝ Մեծ Պահքի շարականներու Մեսրոպեան հարգատուութեան մասին:

Մխիթարեան ձեմարանի անդամներուն համաձայնութեամբ՝ որոշուեցաւ ի լոյս ընծայել Ս. Ղազարի Մատենադարանի ձեռագրական ֆոնդի հաւաքածոյէն ֆառուած ընտիր հատոր մը, նուիրուած հայկական մանրանկարչութեան, գունագեղ արտատպումներով, ի յիշատակ յաւերժական՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600ամեայ յորելիմին: